Յուլիս 21-ին. նորից պահանջ, որ Ադրբէջանը գօրք ուղարկէ դէպի Հայաստանի սահմանները. «Մեր գօրքերի երևալը սահմանների վրա խուճապ կը ձգէ հայերի մէջ, կուժեղացնէ դասալքութիւնը և կը բարձրացնէ մահմետականների ոգին... Եթէ ուզում էք օգուտ բոպէից, ձեռք առէք շտապ և վճռական միջոցներ»: Ու կրկին. «Սպասում են խոշոր դէպքեր: Հայաստանը լարում է իր բոլոր ուժերը»:

Եւ, իրօք, Հայաստանը լարում էր իր բոլոր ուժերը: Մահմետականութիւնը ոտքի էր ելել հայ ժողովրդի ու Հայաստանի գոյութեան դէմ: Յունիս 14-ին, Փարիզի վեհաժողովը օսմանեան պատուիրակութեան յանձնել էր հաշտութեան պայմանները, յոյները գրաւել էին Իզմիրը, մէջտեղը դրուած էր Մեծ Յունաստանի ու ծովից-ծով Հայաստանի ծրագիրը: Եւ մահմետական աշխարհը յուզում էր գայրացած: Սկսում էր քէմալական շարժումը, որի ազդեցութեան տակ Կովկասի մահմետականները համախօսականներով ու հեռագրներով ոմբակոծում էին Հաշտութեան Վեհաժողովն ու դաշնակիցների անդրկովկասեան ներկայացուցիչներին՝ բողոքելով Հայաստանի տիրապետութեան դէմ և պահանջելով իրենց կցումը Թիւրքիային կամ Ադրբէջանին:

Միւս կողմից, յունիս ամսից սկսած, հայկական հետախուզութիւնը նկատում էր Թիւրքերի կողմից զինուորական շտապ պատրաստութիւններ Հայաստանի ուղղութեամբ: «Թիւրքահայաստան ուղարկուած գործակալները, կարդում ենք Հայաստանի Գլխաւոր Սպայակոյտի յունիս 17 գաղտնի զեկուցման մէջ, վկայում են Թիւրք կանոնաւոր զօրամասերի ներկայութիւնը Օլթիի և Սարըղամիշի ուղղութեամբ և Ալաշկերտի շրջանում: Կատարելապէս ստոյգ կերպով հաստատուած է, որ Թիւրքական 12րդ դիվիզիան գտնուում է Խորոսան-Զիւինում՝ կենտրոնն ունենալով Խորոսանում... Քարոզչութիւնը Թիւրքիայի և Անդրկովկասի շրջաններում ուժեղանում է: Այդ նպատակով մեծ քանակութեամբ Թիւրք գործակալներ են ուղարկուած Հայաստանի ներսերը, մահմետական գիւղերը, և ամէն տեղ յայտնաբերուում են մեր վարչութեան և հակահետախուզութեան կողմից: Մասնաւորապէս զօրաւոր է Թիւրք գործակալների ազդեցութիւնը Արդահան—Օլթիի և Բարդուսի շրջաններում, ուր նրանք կազմակերպել են գնդացիրներով զինուած քրդական հրոսախմբեր: Նոյն պատրաստութիւնը կատարուում է և՛ Սարըղամիշ—Կաղզուան տարածութեան վրա և աւելի հեռուները՝ Բարթողեան լեռնաշղթայի քրդաբնակ մասերում մինչև Արարատ»:

Նախապատրաստուելով ներսից ու դրսից՝ Թիւրք-ադրբէջանցիները անցան գործի, որը հեշտանում էր և նրանով, որ անգլիացիք պաշտօնապէս յայտարարել էին, թէ շուտով հեռանալու են Կովկասից. մինչև մայիս 15 Կարսում և մայիս 30 Նախիջևանում արդէն ոչ մի անգլիական զինուոր չէր մնացել: Հայերը մնացել էին միայն իրենց համեստ ուժերով: Այդ օրերին Հայաստանը ունէր երեք հետևակ բրիգադ՝ իւրաքանչիւրը երկու գնդից և գունդը՝ երեք դումարտակից, երկու ձիաւոր գունդ՝ իւրաքանչիւրը վեց հարիւրեակով, 12 մարտկոց՝ ամէն մէկը 4 թնդանօթով, 3 գրահապատ գնացք և մի քանի տեղական զօրամասեր: Այս ուժերը ցրուած էին երկրի բոլոր կողմերում, ունէին թերի կազմ, չնչին քանակութեամբ ռազմամթերք, վատ հագուստ ու պարենաւորում: